

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայաստանի Հանրապետության պետական  
կառավարման պալատի նախագահի ռեկտոր,  
հոգեբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր

.....  Բ. Լոպյան

«27» նոյեմբերի 2020 թ.

## ԿԱՐԾԻՔ

### ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

**Միքայել Էռնեստի Սողոմոնյանի «Բնական մենաշնորհի պետական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02. «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար**

Քննարկումը կատարվել է ՀՀ ՊԿԱ կառավարման ամբիոնում (23.11.2020թ. արձ. N8), որին մասնակցում էին Կառավարման ամբիոնի հիմնական աշխատակիցներ Ա. Այվազյանը՝ Կառավարման ամբիոնի վարիչի Ժ/Պ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վ. Խաչատրյանը՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Ա. Մարկոսյանը՝ ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ամբիոնի դոցենտներ՝ Գ. Չատինյանը՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Գ. Աղամյանը՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Թ. Խեչոյանը, Մ. Բաղայանը՝ տնտեսագիտության թեկնածու: Կառավարման ամբիոնի ժամավճարային հիմունքներով դասախոսներ՝ Խ. Հարությունյանը, Գ. Միքայելյանը, Գ. Թովմասյանը, Ս. Հարոյանը և այլոք:

### Ատենախոսության թեմայի արդիականությունը

Բնական մենաշնորհները շուկայական կառուցվածքի առանձնահատուկ բնագավառ են, որոնց կարգավորման հիմնախնդիրները թե՛ տեսական և թե՛ գործնական առումով միշտ էլ եղել են տնտեսագետների ուշադրության կենտրոնում: Դրանց բացահայտման ուղիները և լուծումները պայմանավորված են եղել հասարակության զարգացման պատմական ժամանակաշրջաններով՝ տնտեսության զարգացման մակարդակին համահունչ: Այն առանձին սրությամբ է դրված

հետխորհրդային տնտեսություն ունեցող երկրների, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության տնտեսության առջև:

Հանրապետության բնական մենաշնորհ ոլորտները կապված են էներգակիրների տեղափոխման և բաշխման հետ, ոռոգման և խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման, երկաթուղու, հեռահաղորդակցության որոշ ծառայությունների կատարման հետ և այլն: Խորհրդային կայսրության փլուզումից և տնտեսական նոր հարաբերություններին անցնելուց հետո խզվեցին ձևավորված տնտեսական կապերը, էապես կրճատվեցին հանրապետության արտադրության ծավալները և դրանով պայմանավորված էներգակիրների սպառման ծավալները: Իսկ դա իր հերթին ազդել է ոլորտը սպասարկող բնական մենաշնորհների գործունեությանը: Տնտեսական նոր իրավիճակը պահանջում է, հաշվի առնելով միջազգային փորձը, թե՛ տեսական և թե՛ գործնական նոր մոտեցումներ ցուցաբերել Հանրապետությունում հանրային ծառայությունների, մասնավորապես՝ բնական մենաշնորհների կարգավորման հիմնախնդիրները լուծելիս: Սրանով է պայմանավորված գրախոսվող ատենախոսության թեմայի արդիականությունը:

Ուստի, Միքայել Էռնեստի Սողոմոնյանի «Բնական մենաշնորհի պետական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության շրջանակում կատարված հետազոտության արդիականությունը կասկած չի հարուցում: Հատկապես, որ դրանում կատարված տեսական հարցադրումները և գործնական առաջարկություններն ուշագրավ են և հետաքրքրություն են ներկայացնում:

### **Ատենախոսության հիմնական բովանդականությունը**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունների մասից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության ներածությունում որպես հետազոտության նպատակ ներկայացվել է՝ «բնական մենաշնորհների ձեռնարկությունների պետական կարգավորման կառուցակարգերի կատարելագործմամբ Հայաստանի Հանրապետությունում պետության, սպառողի և բնական մենաշնորհի սուբյեկտների շահերի

հավասարակշռության ապահովումը»: Դրանից ելնելով ատենախոսը կարևորել է հետևյալ 9 խնդրի լուծման անհրաժեշտությունը.

- ուսումնասիրել մենաշնորհի և մենաշնորհային շուկայական կառուցվածքի տնտեսական բովանդակությունը, դրանց տեսակները և ձևավորման էվոլյուցիոն գործընթացը,
- բացահայտել բնական մենաշնորհի գործառնությունների իրականացման կառուցակարգերն ու առանձնահատկությունները,
- վերլուծել համաշխարհային տնտեսությունում բնական բնական մենաշնորհի տարածված ձևերը, դրանցից մատնանշել Հայաստանի համար կիրառելի տարբերակները,
- վերհանել և ներկայացնել բնական մենաշնորհի էվոլյուցիոն զարգացումները, ապապետականացման և մասնավորեցման ասպեկտներն աշխարհի տարբեր երկներում, այդ թվում՝ նաև Հայաստանի Հանրապետությունում,
- հիմնավորել ոլորտի պետական կարգավորման անհրաժեշտությունը և սահմանել պետության մասնակցության չափերը բնական մենաշնորհի կարգավորման հարցում,
- ուսումնասիրել և վերլուծել բնական մենաշնորհի պետական կարգավորման մեթոդաբանական ասպեկտները և նախանշել դրանց կիրառման հնարավորությունները Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման բնագավառում,
- ներկայացնել Հայաստանի բնական մենաշնորհի պետական կարգավորման ինստիտուցիոնալ վերափոխումները նրա կատարելագործման համատեքստում,
- բացահայտել Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհի պետական կարգավորման ոլորտում առկա հիմնահարցերը,
- մշակել բնական մենաշնորհները կարգավորող պետական մարմնի գործունեության, սակագների հաշվարկման մեթոդաբանություն և բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների կատարելագործման, ինչպես նաև ներդրումների ներգրավման խթանիչ գործիքակազմի բարելավման ուղղություններ և կառուցակարգեր:

Ներածության մեջ ներկայացվել են նաև հետազոտության առարկան և օբյեկտը, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորոյթը և արդյունքները, գործնական նշանակությունը, ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները և կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլխում ներկայացվել են մենաշնորհի տնտեսական բովանդակությունը, բնորոշումներն ու տեսակները, բնական մենաշնորհի գործառույթներն ու դրանց իրականացման կառուցակարգերը, ինչպես նաև ՀՀ ապապետականացման գործընթացի համատեքստում բնական մենաշնորհների ձևավորումը և միջազգային փորձի ուսումնասիրությունը:

Աշխատանքի երկրորդ գլխում դիտարկվել են բնական մենաշնորհի պետական կարգավորման միջազգային փորձի վերլուծությունը, պետության մասնակցության անհրաժեշտությունը բնական մենաշնորհի կարգավորման գործում և այդ մասնակցության սահմանները, ինչպես նաև բնական մենաշնորհի պետական կարգավորման մեթոդաբանության վերլուծությունը:

Ատենախոսության երրորդ գլխում արտացոլվել են ինստիտուցիոնալ վերափոխումները ՀՀ բնական մենաշնորհի համատեքստում, ՀՀ-ում բնական մենաշնորհի սակագնային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը և սակագնային քաղաքականության կատարելագործման համատեքստում ՀՀ բնական մենաշնորհի պետական կարգավորումը:

### **Աշխատանքի հիմնական գիտական արդյունքներն ու դրանց գիտագործնական նշանակությունը**

Ատենախոսության ուսումնասիրության հիման վրա առանձնացրել ենք ներքոհիշյալ նորոյթները.

- Մշակվել են պետության ու բնական մենաշնորհի սուբյեկտների փոխգործակցության նոր կանոններ և կառուցակարգեր:
- Բացահայտվել են բնական մենաշնորհի պետական կառավարման և պետական կարգավորման հիմնախնդիրներն ու հիմնավորվել է, որ պետությունը նույնպես պետք է ունենա կարգավորման սուբյեկտի կարգավիճակ:

- Մշակվել է բնական մենաշնորհը կարգավորող պետական անկախ մարմնի ֆինանսավորման և գործունեության վերահսկողության նոր կառուցակարգ:
- Մշակվել է բնական մենաշնորհի կարգավորման խթանիչ գործիքակազմ, մասնավորապես՝ սակագների կարգավորման նոր մեթոդաբանություն:

### **Հետազոտության գործնական նշանակությունը**

Հետազոտությունում ստացված արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ հանրային ծառայությունների կարգավորող հանձնաժողովում բնական մենաշնորհի ծառայությունների սակագները հաշվարկելիս ինչպես նաև հանձնաժողովի անկախության մակարդակի բարձրացման ուղված ինստիտուցիոնալ բարեփոխումների հետագա ընթացքում:

### **Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ**

Կատարված հետազոտությունում դրականին առընթեր կան նաև որոշակի թերություններ և բացթողումներ, որոնցից կարելի է առանձնացնել.

1. Բնական մենաշնորհի հասկացության վերաբերյալ տարբեր հեղինակների կարծիքները համադրական շարադրված չեն, այդ սահմանումների վերաբերյալ գիտական վերլուծությունները դրական և բացասական կողմերի տեսանկյունից, ինչպես նաև հեղինակի կողմից առկա մոտեցումների առումներով բացակայում են: Իսկ մյուս կողմից գծապատկեր 1-ում (էջ 17) ներկայացված բնական մենաշնորհի տեսակները, որտեղ ըստ առաջացման բնույթի և պատճառների հեղինակն առանձնացրել է բնական պայմաններով մենաշնորհի հասկացությունը, ըստ էության համընկնում է Մարքսի դիրքորոշմանը և բնական մենաշնորհը նույնացվում է «բնության» մենաշնորհի հետ (էջ 9):
2. Վիճելի է հեղինակի այն պնդումը, որ. «Ժամանակակից տնտեսագիտության տեսությունը բնական մենաշնորհի պետական կարգավորումն առաջացնում է տարածական և ժամանակային սահմանները» (էջ 71): Ակնհայտ է՝ հեղինակը բնական մենաշնորհի կարգավորման սահմանները նույնացնում է ապրանքային

շուկայի սահմանների հետ (ապրանքատեսակային, աշխարհագրական և ժամանակային):

3. Աշխատանքն ավելի կարժևորվեր, եթե «բնական մենաշնորհի պետական կարգավորման մեթոդաբանության վերլուծությունը»՝ 2.3 ենթագլխում, որևէ բնական մենաշնորհ ծառայության սակագնի հաշվարկման օրինակով ցույց տրվեր գործող մեթոդաբանության թերությունները և դրա հիման վրա կատարվեին առաջարկություններ:
4. Աշխատանքում առկա են որոշ տեխնիկական և խմբագրական թերություններ, օրինակ՝ էջ 51 և 115-ում բացակայում են հղումները և այլն:

### **ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

Աշխատանքը շարադրված է գրագետ: Արված դիտողությունները, մեր կարծիքով, չեն նսեմացնում հետազոտության արդյունքները: Դրանք հետապնդում են ատենախոսի հետագա ուսումնասիրությունների որակի բարելավման նպատակ:

Միքայել Էռնեստի Սողոմոնյանի Ը.00.02. «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ «Բնական մենաշնորհի պետական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է հաստատված թեմայի թվանիշին: Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի գիտական 7 (յոթ) գիտական հրապարակումներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է հիմնական դրույթները:

Միքայել Էռնեստի Սողոմոնյանի «Բնական մենաշնորհի պետական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն

արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի՝ որպես առաջատար կազմակերպության, «Կառավարման» ամբիոնի նիստում (23.11.2020թ. արձանագրություն թիվ 8):

ՀՀ ՊԿԱ կառավարման ամբիոնի վարիչի  
Ժ/Պ, տեխնիկական գիտությունների  
թեկնածու, դոցենտ՝




Ա. Յու. Այվազյան

Ա. Յու. Այվազյանի ստորագրությունը հաստատում եմ.

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
գիտական քարտուղար, հոգեբանական  
գիտությունների թեկնածու, դոցենտ՝



 / Ս.Տ. Պողոսյան

27.11.2020թ.